## *ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ*

ՀՏԴ: 929: 784.1(479.25) Զեյթաղյան + 78(479.25)
DOI: 10.54503/2579-2830-2022.2(8)-278

**Աննա ԱԴԱՄՅԱՆ, Արմինե ԲԱԲԱՅԱՆ,** Լուիզա Զեյթաղյան. խմբավարը և մանկավարժը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, 64 էջ:

***Բանալի բառեր՝*** Լուիզա Զեյթաղյան, խմբավար, մանկավարժ, երգչախումբ, խորհրդահայ կատարողական արվեստ, խմբերգային արվեստ, Լենինական:

2022 թ. ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս ընծայեց արվեստագիտության թեկնածու, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դոցենտ Աննա Ադամյանի և խմբավար, Մյունխենի Լյուդվիգ Մաքսիմիլանի անվան համալսարանի մագիստրոս Արմինե Բաբայանի «Լուիզա Զեյթաղյան. խմբավարը և մանկավարժը» գիրքը: Գրքի խմբագիրն է ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանը, իսկ գրախոսները՝ երաժշտության բաժնի ավագ գիտաշխատողներ, արվեստագիտության թեկնածուներ Տաթևիկ Շախկուլյանը և Գայանե Ամիրաղյանը:

Վաստակաշատ խմբավար և մանկավարժ Լուիզա Զեյթաղյանն անուրանալի ավանդ ունի խորհրդահայ խմբերգային արվեստի զարգացման բնագավառում: Մասնագիտական ասպարեզ մտնելով 1950-ական թթ.՝ նա խմբավարական-մանկավարժական գործունեություն է ծավալել Լենինականի (Գյումրի) և Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարաններում, ղեկավարել ինքնագործ երգչախմբեր, որպես խմբավար աշխատել է Հայաստանի պետական ակադեմիական կապելլայում, հեղինակել մեթոդական ձեռնարկներ: Լ. Զեյթաղյանի մասնագիտական դասարանից դուրս են եկել հայ խմբերգային արվեստի զարգացման գործում իրենց ակտիվ ներդրումն ունեցած բազմաթիվ տաղանդաշատ խմբավարներ:

Գրախոսվող աշխատանքը Լ. Զեյթաղյանի կյանքն ու գործունեությունը լուսաբանող առաջին մենագրությունն է և նվիրված է նրա ծննդյան 95-ամյա հոբելյանին: Հեղինակների համար ուսումնասիրության աղբյուր են ծառայել Լ. Զեյթաղյանի անձնական արխիվի նյութերը, այդ թվում՝ նամակները, լուսանկարները, ուսանողների, գործընկերների և ընտանիքի անդամների հուշերը, մամուլի արձագանքները, համերգային ազդագրերը և ծրագրերը: Նշված նյութերի մի մասը հրապարակվել է գրքում:

Գիրքը բաղկացած է «Նախաբանի փոխարեն» խորագիրը կրող ներածական բաժնից և վեց գլուխներից:

«Նախաբանի փոխարեն» բաժնում ամփոփ ներկայացվում է հայ խմբերգային արվեստի ձևավորման ուղին՝ սկսած նրա հիմնադրումից (XIX դարի վերջ) մինչև խորհրդային շրջան:

Գրքի առաջին գլխում («Մասնագիտական ձևավորման և կայացման ուղին. խմբավարական և մանկավարժական գործունեության սկիզբը») Լ. Զեյթաղյանի անձնական կյանքի գլխավոր իրադարձություններին զուգահեռ ուրվագծվում է նրա մասնագիտական կայացման ընթացքը: Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի մեներգեցողության բաժնում ուսանելուց (1945-1948), այնուհետև՝ դիրիժոր-խմբավարական բաժինն ավարտելուց հետո (1954) Զեյթաղյանը որոշ ժամանակ աշխատել է Հայֆիլհարմոնիայի պետական երգչախմբում՝ որպես երգչուհի: Մասնագիտական գործունեության հաջորդ փուլը կապված էր Լենինականի հետ (1954-1958): 1958-ից հետո Զեյթաղյանը վերադարձել է Երևան, որտեղ ավելի քան երկու տասնամյակների ընթացքում ակտիվ խմբավարական-մանկավարժական գործունեություն է ծավալել: Վախճանվել է երկարատև հիվանդությունից հետո՝ 1991 թ.: Առաջին գլխի եզրափակիչ հատվածում Լ. Զեյթաղյանի ուսանողների, ինչպես նաև նրա դստեր՝ Նունե Սարգսյանի և թոռնուհու՝ գրախոսվող գրքի համահեղինակ Արմինե Բաբայանի հուշերի հիման վրա ներկայացվում է նրա մասնագիտական և մարդկային նկարագիրը, որի հիմնական բնութագրիչներն են՝ բարձր պրոֆեսիոնալիզմը, մարդկային և արտիստական հմայքը, գեղարվեստական հետաքրքրությունների լայն շրջանակը, հետևողական ու խիստ, սակայն դրա հետ մեկտեղ՝ ուշադիր ու սրտացավ վերաբերմունքն իր սաների, երգչախմբի անդամների հանդեպ, ուժեղ, կենսուրախ, եռանդուն խառնվածքը, գյումրեցուն հատուկ հումորն ու հյուրընկալությունը: Ա. Բաբայանն իր հուշերում ընդգծում է տատիկի ծանրակշիռ դերը երաժշտական ասպարեզն ընտրելու և մասնագիտական կայացման գործում:

Երկրորդ գլխում («Մասնագիտական գործունեություն: Լենինականյան ժամանակաշրջանը») լուսաբանվում է Լ. Զեյթաղյանի՝ Լենինականում աշխատելու շրջանը (1954-1958): Այդ տարիներին նա ղեկավարել է մի քանի ինքնագործ երգչախմբեր (այդ թվում՝ Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի երգչախումբը), որոնք Զեյթաղյանի շնորհիվ հասել են կատարողական բարձր մակարդակի, մասնակցել մի շարք միջոցառումների և փառատոների: Լենինականյան շրջանը նշանավորվում է նաև Լ. Զեյթաղյանի՝ խորհրդահայ երաժշտարվեստի ականավոր ներկայացուցիչների, այդ թվում՝ Արամ Խաչատրյանի, Ալեքսեյ Հեքիմյանի, Արամ Տեր-Հովհաննիսյանի, Օհան Դուրյանի և այլոց հետ ստեղծագործական հանդիպումներով ու շփումներով:

Գրքի երրորդ գլուխը («Մանկավարժական գործունեության հասուն շրջանը Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում») նվիրված է անվանի խմբավարի և մանկավարժի գործունեության առավել հարուստ, բեղուն ու տևական ժամանակահատվածին: 1958-1980 թթ. Լ. Զեյթաղյանը պաշտոնավարել է Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում՝ որպես խմբավարադիրիժորական բաժնի վարիչ, ինչպես նաև ղեկավարել է ուսումնարանի

երգչախումբը: Զեյթաղյանի հմուտ ղեկավարությամբ կոլեկտիվը մասնակցել է տարբեր միջոցառումների, համերգների, փառատոների, մրցույթ-ստուգատեսների: Երգչախմբի ելույթները լուսաբանվել են պարբերական մամուլի էջերում («Ավանգարդ», «Կոմունիստ», «Կոմսոմոլեց»)՝ արժանանալով բարձր գնահատականի: Մամուլի՝ գրքում բերված քաղվածքներում կոլեկտիվի արժանիքների շարքում նշվում է, մասնավորապես, նուրբ, փափուկ, մաքուր ու հավասար հնչողությունը, ինտոնացիոն հստակությունը, կատարման արտահայտչականությունը: Երգչախմբի առավելություններից էր նաև հարուստ ու բազմազան երկացանկը, որում ներառված էին հայկական, ռուսական, արևմտաեվրոպական տարբեր շրջանների երաժշտական արվեստի նմուշներ, այդ թվում՝ հասուն պրոֆեսիոնալ երգչախմբերի երկացանկին բնորոշ բարդ ստեղծագործություններ:

Դիտարկվող ժամանակահատվածում Լ. Զեյթաղյանը զբաղվել է նաև մանկավարժական-մեթոդական ակտիվ գործունեությամբ: 1964-1970 թթ. Խորհրդային Հայաստանի տարբեր քաղաքներում (Լենինական, Կիրովական, Ղափան) նա մեթոդական օգնություն է ցուցաբերել տեղի ուսուցիչներին, օժանդակել խորհրդատվություններով ու սեմինար-պարապմունքներով:

Քննվող գլխի եզրափակիչ մասում բերված է Զեյթաղյանի շնորհակալական խոսքն իր 60-ամյա հոբելյանի առթիվ կազմակերպված միջոցառմանը, որին հետևում է երրորդ գլխի՝ «Լուիզա Զեյթաղյանի մեթոդական աշխատանքները» ենթաբաժինը: Այստեղ հակիրճ ներկայացված են հմուտ մանկավարժի հետ համահեղինակությամբ ստեղծված ուսումնամեթոդական ձեռնարկները՝ նախատեսված խմբավարների համար:

Չորրորդ գլխում («Գործունեությունը պետական ակադեմիական կապելլայում») ներկայացվում է Լ. Զեյթաղյանի խմբավարական աշխատանքի շրջանը Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբում՝ 1970-1977 թթ.: Այս կոլեկտիվի համար, որի ղեկավարությունը 1961 թ. ստանձնել էր Հովհաննես Չեքիջյանը, նշված ժամանակահատվածը նշանավորվում է բուռն և արդյունավետ գործունեությամբ: Երգչախումբը համերգներով հանդես է գալիս Խորհրդային Միության բազմաթիվ քաղաքներում, տեղի են ունենում կապելլայի առաջին արտասահմանյան հյուրախաղերը (1974 թ.՝ Լիբանան, Ֆրանսիա): Կոլեկտիվի երկացանկում մշտական տեղ զբաղեցնող հայ երաժշտության դասականների և, առաջին հերթին, Կոմիտասի երկերից բացի ներառվում էին համաշխարհային դասական երաժշտության գլուխգործոցներ (այդ թվում՝ Լ. վան Բեթհովենի Իններորդ սիմֆոնիան, Վ.Ա. Մոցարտի և Հ. Բեռլիոզի “Requiem”-ները, Ջ. Ռոսինիի “Stabat mater”-ը և այլն): Տեղական և արտասահմանյան մամուլը մշտապես հիացմունքով է արձագանքել կապելլայի ելույթներին՝ ընդգծելով կոլեկտիվի բացառիկ կատարողական վարպետությունը: Երգչախմբի հաջողությունների գործում իր անմիջական և զգալի ներդրումն է ունեցել նաև Լ. Զեյթաղյանը, ինչը խիստ բարձր է գնահատվել մասնագետների կողմից: Զեյթաղյանի աշխատանքն ըստ արժանվույն գնահատել է նաև Հովհ. Չեքիջյանը՝ կարևորելով նրա մեծ դերը կոլեկտիվի կատարողական վարպետության բարձրացման և ընդգրկուն երկացանկի մշակման գործում:

Գրքի հինգերորդ գլխում («Մասնագիտական գործունեությունը Երևանի Լուսաշխի տանը») հեղինակներն անդրադարձել են Լ. Զեյթաղյանի՝ Լուսավորության աշխատողների տան երգչախումբը ղեկավարելու ժամանակահատվածին (1967-1982 թթ.): 1922 թ. հիմնված՝ Լուսավորության աշխատողների (Լուսաշխի) տունը առաջինն էր հասարակության լայն շերտերի կրթամշակութային զարգացման բարձր աստիճանն ապահովելու նպատակով ստեղծված միավորումների (կուլտուրայի տներ, արհմիություններին առընթեր ակումբներ) շարքում և իր գոյության մի քանի տասնամյակների ընթացքում հարուստ ավանդույթներ էր ձևավորել: 1929-ին կազմավորվել է Լուսաշխի տան ինքնագործ երգչախումբը (Ուսուցչի տան երգչախումբ), որի խմբավարների թվում են եղել Ստ. Դեմուրյանը, Կ. Զաքարյանը, Թ. Ալթունյանը, Մ. Մազմանյանը, Վ. Ումր-Շատը և այլք: 1967-ին ստանձնելով կոլեկտիվի ղեկավարությունը՝ Լ. Զեյթաղյանը զարգացման նոր թափ է հաղորդել երգչախմբին՝ հարստացնելով երկացանկը դասական ու ժամանակակից կոմպոզիտորների երկերով: Զեյթաղյանի ղեկավարությամբ Երևանի ուսուցչի տան երգչախումբը հյուրախաղերով հանդես է եկել Լենինգրադում 1969 թ., նույն թվականին մեծ շուքով նշվել է կոլեկտիվի հիմնադրման 40-ամյա հոբելյանը: 1976-ին ՀԽՍՀ կուլտուրայի մինիստրության և Հայաստանի երգչախմբային ընկերության կազմակերպած երգչախմբերի հանրապետական մրցույթում Ուսուցչի տան երգչախումբն արժանացել է երրորդ կարգի մրցանակի՝ դրամական պարգևատրումով: 1980 թ. կոլեկտիվը Հայաստանում հյուրընկալել է Չեխոսլովակիայի Լիբերեց քաղաքի «Եշտեդ» երգչախմբին, իսկ 1982-ին տեղի է ունեցել հայկական երգչախմբի պատասխան այցը Չեխոսլովակիա, որտեղ նրանք շրջագայել են մի շարք քաղաքներում: Նշված ժամանակաշրջանում Ուսուցչի տան երգչախմբի հաջողությունները լուսաբանվել են տեղական և արտասահմանյան մամուլում, որից բերված ծավալուն քաղվածքներում հոդվածագիրները մատնանշում են կոլեկտիվի կատարողական բարձր որակը, հարուստ ու բազմազան երկացանկը:

Գրքի եզրափակիչ՝ վեցերորդ գլխում («Հիշողությունների ծիրում») մեկտեղված են հարցազրույցներ Լ. Զեյթաղյանի նախկին ուսանողների, այդ թվում՝ Լուսինե Ազարյանի, Լյուբա Հովհաննիսյանի, Արթուր Հակոբյանի, Սարգիս Դեմիրճյանի, Մկրտիչ Բաբաջանյանի, Նունե Մելիքսեթյանի և Գևորգ Մուրադյանի հետ, որոնք խմբավարական-մանկավարժական գործունեություն են ծավալում ՀՀ, Արցախի և Սփյուռքի տարբեր կրթօջախներում: Նախկին սաներից յուրաքանչյուրն իր հուշերում ընդգծում է սիրելի ուսուցչի հսկայական ներդրումն իր մասնագիտական կայացման գործում: Անսահման սիրով ու երախտիքի զգացումով հագեցած նրանց տողերում հառնում է Լ. Զեյթաղյանի՝ խստապահանջ ու խորաթափանց մանկավարժի, փայլուն ու բազմակողմանի մասնագետի, նրբազգաց, հոգատար, բարոյական բարձր արժանիքներով առաջնորդվող մարդու կերպարը:

Գրքի վերջում բերված են Լ. Զեյթաղյանի պարգևների և պատվոգրերի ցանկը, գրքի հեղինակների երախտագիտության խոսքը և օգտագործված գրականության ցանկը:

Գրախոսվող աշխատանքն ամբողջական պատկերացում է տալիս բազմավաստակ խմբավարի և վաստակաշատ մանկավարժի կյանքի ու գործունեության մասին, բացահայտում նրա մասնագիտական ու մարդկային նկարագիրը, ընդգծում նրա անուրանալի ներդրումը խորհրդահայ խմբերգային արվեստի զարգացման գործում:

Գիրքն, անկասկած, արժեքավոր ներդրում է XX դարի հայ կատարողական արվեստի ուսումնասիրության ոլորտում: Այն հասցեագրված է ինչպես երաժշտագետներին, խմբավարներին և երաժշտության բնագավառի այլ ներկայացուցիչներին, այնպես էլ երաժշտասեր հանրությանը:

Շնորհավորում ենք հեղինակներին նման արժեքավոր աշխատանքի լույսընծայման առթիվ, որն իր արժանի տեղը կզբաղեցնի հայ կատարողական արվեստի պատմության արժեքավոր աղբյուրների ցանկում:

Հուսով ենք, որ հետագայում այդ ցանկը կհամալրվի հայ կատարողական արվեստի երախտավորների կյանքն ու գործունեությունը լուսաբանող նոր աշխատություններով:

**Գայանե ԱՄԻՐԱՂՅԱՆ**
արվեստագիտության թեկնածու,
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող